

# Շրջիկ գրադարանի այցը Շիրակի մարզ,

## Աշոցքի տարածաշրջան

Սեպտեմբերի 2-ին Ազգային գրադարանի փոխտնօրեն Հասմիկ Ղազարյանը, գրքափոխանակության բաժնի վարիչ Անժելա Սամսոնյանը և աշխատակից Արթուր Հովսեփյանը բիբլիոթեկոսով շուրջ 870 միավոր գրականություն նվիրեցին Աշոցքի կենտրոնական գրադարանին, որտեղ իրենց էին սպասում ոչ միայն Աշոցքի գրադարանի տնօրեն Աստղիկ Պողոսյանը և աշխատակիցները, այլ նաև՝ հարակից 9 գյուղական գրադարանների ներկայացուցիչներ:

Տրամադրվող գրականությունը նախատեսված էր Աշոցքի կենտրոնական գրադարանին՝ 161 միավոր, Բաշգյուղ, Գոգհովիտ, Զույգաղբյուր, Թորոսգյուղ, Կրասար գյուղական գրադարաններին՝ 76-ական միավոր, իսկ Կարմրավան, Հարթաշեն, Սարիար, Ցողամարգ գյուղերի գրադարաններին՝ 82-ական միավոր:

Աշոցքի կենտրոնական գրադարանը ստեղծվել է 1950 թվականին և գործել է որպես խրճիթ-ընթերցարան, այնուհետև 1952թ. վերակազմավորվել՝ որպես մասսայական գրադարան: Այժմ այն տեղակայված է գյուղի մշակույթի տան առաջին հարկում՝ նորակառույց դպրոցի հարևանությամբ: Գրադարանն ունի շուրջ 25 000 միավոր գրականություն, իսկ ընթերցողների թիվը տարվա կտրվածքով 600-700 է կազմում: Չնայած նրան, որ վաղուց արդեն գրադարանն ունի տարածքի վերանորոգման, անհրաժեշտ գույքի և համակարգչի կարիք, շնորհիվ տնօրեն Աստղիկ Պողոսյանի և երեք աշխատակիցների նվիրվածության և ջանքերի, այն գտնվում է բավական խնամված վիճակում, կան նորմալ գործող քարտարաններ, գույքամատյաններ, իսկ մանկական սրահը լրացուցիչ կահավորված է ձեռքի աշխատանքներով ու ինչ որ չափով ավելի գրավիչ ու հաճելի է դարձնում երեխաների սպասարկումը:

Գրադարանը համալրվում է նվիրատվությունների, ինչպես նաև մարզային գրադարանի աջակցությամբ: Այստեղ կազմակերպում են նաև զանազան միջոցառումներ՝ հանդիպումներ, ցերեկույթներ, գրական-երաժշտական կոմոզիցիաներ, գրքի քննարկումներ, զրույցներ, թատերականացված հանդեսներ, գրքի շնորհանդեսներ և այլն, հրավիրում են հյուրեր, իսկ կատարված աշխատանքների խրոնիկան պահպանվում է և արխիվացվում: